

ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՆՈՒՆՈՎ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՓՈԽԱՆՈՐԴ ԳԵՐԱՇՆՈՐՀ ՏԵՐ ԽԱԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՑ ՍՏԱՑՎԱԾ ՆԱՄԱԿՆ ՈՒ ՀԵՌԱԳՐԵՐԸ ԼՈՒՍԱՀՈԳԻ Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ԾԱՆՐԱՑՄԱՆ, ՄԱՀՎԱՆ ԳՈՒՅԺԻ ԵՎ ԹԱՂՄԱՆ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ԳԵՈՐԳ Զ. ՎԵՇԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Է Ջ Մ Ի Ա Ծ Ի Ն

Վեհափա՛ռ Տեր.

«Էջմիածին» ամսագրի վերջին թիվին մեջ սրտի կսկիծով կարդացինք Ձերդ Սուրբ Օծության ականջի բորբոքումի հետևանքով անհանգստացած ըլլալը: Փառք կուտանք Ամենակարողին, որ Մոսկվայի մեջ Ձեր ստացած բժշկական լուրջ խնամքին արդյունքը բարի եղած է ու վերազտած եք Ձեր կատարյալ առողջությունը:

Այս առթիվ կուգանք սրտի խոր ցավով իմացնել Ձերդ Սուրբ Օծության մեր շատ սիրելի Վեհափառ Հայրապետի առողջական վիճակին լրջորեն մտահոգիչ երևույթ ստացած ըլլալը. մասնագետ բժիշկներ բոլորովին հուսահատության մատնած են մեզ. վերջին շաբաթներուն այլևս ուժաթափ եղած՝ ոչ կրնա քնանալ և ոչ ալ սնունդ ստանալ:

Տերը խնայե մեզի դժբախտություն մը և առողջություն պարգևե մեր սիրեցյալ Վեհափառին:

Ջերմորեն մաղթելով Ձերդ Սուրբ Օծության առողջ կյանք և արևշատություն, մնամ որդիական համբուրիվ Սուրբ և Օծյալ Աջոյդ՝

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՓՈԽԱՆՈՐԴ՝

ԽԱԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱԶԱՊԱՀՅԱՆ

Անթիլիաս, 10 հունիս 1952

Գարեգին Կաթողիկոսն անհուսալի վիճակումն է:

ԽԱԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

23 հունիսի 1952 թ.

Խորը վշտով հայտնում ենք Գարեգին Կաթողիկոսի մահը:

ԽԱԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

23 հունիսի 1952 թ.

Թաղումը հետաձգվում է: Սպասում ենք:

ԽԱԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

25 հունիսի 1952 թ.

ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ ԳԵՐԱՇՆՈՐՀ ՏԵՐ ԽԱԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ՝ ԼՈՒՍԱՀՈԳԻ ԳԱՐԵԳԻՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԹԻՎ

ԱՄԵՆԱՊԱՏԻՒ ՏԵՂԱԿԱԼԻՆ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԳԵՐԱՇՆՈՐՀ ՏԷՐ ԽԱԴ ՎՇՏԱԿԻՐ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ՝ Ի ԳԱՀԷՆ ԱՌԱՔԵԼԱՇԱՒԻՂ ՍՐԲՈՅ ՀՕՐՆ ՄԵՐՈՅ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ՝ ՏԻՐԱՒԱՆԴ ՈՂՋՈՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ

ԱՆԹԻԼԻԱՍ — ԲԵՅՐՈՒԹ (ԼԻԲԱՆԱՆ)

Տանն Կիլիկիո շնորհազարդ Տ. Գարեգին Ա. Կաթողիկոսի մահը շանթահար արավ Մեզ, միաբանությանս և համայն հավատացյալ ժողովրդին: Հանգուցյալի մահը անփոխարինելի կորուստ է հայության համար: Կիլիկիո Աթոռը և միաբանությունը կորցնում են իրենց առաջնորդող լուսատու աստղը, Հայ Եկեղեցին՝ իր հավատարիմ և անձնվեր նվիրյալ սպասավորին, հայ ժողովուրդն ու Հայրենիքը՝ իրենց ժողովրդասեր, հայրենասեր և երախտագետ սիրասուն զավակին և հայ մշակույթը՝ իր մեղվաջան մշակին:

Մաղթում ենք մարդասեր Փրկչին, որ ուղարկե իր մխիթարիչ Սուրբ Հոգին՝ մխիթարելու Ս. Էջմիածնի և Կիլիկիո Աթոռների միաբանությանց, համայն հայ հոգևորականության և հավատացյալ ժողովրդին:

Հայրական և հայրապետական հորդոր ենք կարդում Կիլիկիո Աթոռի միաբանության, հոգևորականության և հավատացյալ ժողովրդին, որ Հանգուցյալի հիշատակը հավետ կենդանի պահեն իրենց հոգու մեջ՝ հավատարիմ մնալով նորա դավանած ու պաշտած Հայ Եկեղեցու միասնականության, ազգային միության և Եկեղեցու անկախության գաղափարներին ու նորա դավանանքին, որ՝ Սահակ-Մեսրոպյան շրջանից ցայսօր՝ ավանդ են թողել մեզ երջանկահիշատակ սրբացյալ հայրապետները և մեր խնկելի ու պաշտելի մարտիրոս նախնիքը, որով ցայսօր ապրել է հայ ժողովուրդը և պիտի ապրի հետ այսորիկ:

Մաղթում ենք նաև պարգևել Ձեզ՝ Ամենապատիվ Տեղակալիդ, անհողդողդ կամք, տոկունություն, եռանդ և արևշատություն, որ Հայ Եկեղեցուն և Հանգուցյալի գաղափարներին հավատարիմ մնալով՝ ղեկավարեք Ձեզ հավատացված հոտը մեր նախնյաց գծած ճշմարտության ուղիով:

Մեծ ցավ է Մեզ, որ ներկա առողջական վիճակս չի ներում գալու և հանդիսադիր լինելու Մեր բանկագին և սիրեցյալ եղբոր թաղման սգահանդեսին և անձամբ օծելու նորա մարմինը: Սակայն թե՛ Մեզ և թե՛ հայ ժողովրդի համար մխիթարական կլիներ, եթե Հանգուցյալի մարմինը, Կոմիտաս կաթողիկոսի օրինակով, ամփոփվեր վանքի տաճարի մեջ:

Յիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի:

Գ. Զ.

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ
ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԹԵՄԵՐԻՆ՝ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԵՐՋԱՆԿԱՀԻՇԱՏԱԿ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ ԳԱՐԵԳԻՆ Ա.Ի ՄԱՀՎԱՆ ՄԱՍԻՆ

Տանն Կիլիկիո շնորհազարդ Տ. Գարեգին Ա. Կաթողիկոսի մահը շանթահար արավ Մեզ, միաբանությանս և համայն հավատացյալ ժողովրդին: Հանգուցյալի մահը անփոխարինելի կորուստ է հայության համար: Կիլիկիո Աթոռը կորցնում է իր առաջնորդող լուսատու աստղը, Հայ Եկեղեցին՝ իր հավատարիմ և անձնվեր նվիրյալ սպասավորին, հայ ժողովուրդն ու Հայրենիքը՝ իրենց ժողովրդասեր, հայրենասեր և երախտագետ սիրասուն զավակին և հայ մշակույթը՝ իր մեղվաջան մշակին:

Աղերսագին աղոթենք մարդասեր Փրկչին, որ Նա Հանգուցյալի հիշատակը կենդանի պահե կաթողիկոսական, պատրիարքական և առաջնորդական աթոռների գահակալների հոգիների մեջ՝ հավատարիմ նորա դավանած ու պաշտած Հայ Եկեղեցու միասնականության, ազգային միության և եկեղեցու անկախության գաղափարներին ու դավանանքին, որ ավանդ են թողել մեզ մեր երջանկահիշատակ սրբացյալ հայրապետները և մեր խնկելի ու պաշտելի մարտիրոս նախնիքը, որով ցայսօր ապրել է հայ ժողովուրդը և պիտի ապրի հետ այսորիկ:

Այսու առաջարկում ենք՝ Հանգուցեալի հիշատակին մատուցել հանդիսավոր պատարագ, կատարել հոգեհանգիստ և քարոզել՝ տալով նորա գործունեության ամփոփ ճկարագիրը և պատկերելով նորա մատուցած ծառայությունը Եկեղեցուն և հայ մշակույթին:

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ՝

ԳԵՈՐԳ Զ.

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԵՐՋԱՆԿԱՀԻՇԱՏԱԿ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա.Ի ՄԱՀՎԱՆ ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՆՈՒՆՈՎ ՍՏԱՑՎԱԾ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ՀԵՌԱԳՐԵՐԸ

ԵՐԵՎԱՆԻՑ

Հայկական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի Մինիստրների Սովետին կից Հայ Եկեղեցու գործերի խորհրդի կողմից և անձամբ իմ կողմից խորին ցավակցություն եմ հայտնում Նորին Սուրբ Օծություն Տանն Կիլիկիո Գարեգին Ա. Կաթողիկոսի մահվան առթիվ:

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԿԻՑ
ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝
ՀՐ. ԴՐԻԳՈՐՅԱՆ

ՕԴԵՍԱՅԻՑ

Այսօր հանձնեցին Մեզ Ձեռդ Սրբության ուղարկած հեռագիրը՝ Կիլիկիո Կաթողիկոս Գարեգին Ա.ի մահվան առթիվ: Մեր խորին ցավակցությունն ենք հայտնում Հայ եկեղեցու այդ ականավոր գործչի կորստյան առթիվ:

ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ՊԱՏՐԻԱՐՔ՝
ԱԼԵՔՍԻ

ՄՈՍԿՎԱՅԻՑ

Նորին Սրբությունը և անձամբ ես հայտնում ենք Ձեռդ Սրբությանը վշտով համակված մեր խորը զգացմունքները մեր հույր Հայ եկեղեցու կրած կորստյան՝ Կիլիկիո Գարեգին Ա. Կաթողիկոսի մահվան առթիվ:

ԿՐՈՒՏԻՑԿՈՒ ԵՎ ԿՈԼՈՄԵՆԱՅԻ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ՝
ՆԻԿՈԼԱՑ

ԹԲԻԼԻՍԻՑ

Վրաստանի հավատացյալները և ես խորապես վշտակցում ենք խաղաղության գաղափարների համար բոցավառ մարտնչող Գարեգին Ա.ի մահվան առթիվ:

ՀԱՄԱՅՆ ՎՐԱՍՏԱՆԻ ՊԱՏՐԻԱՐՔ-ԿԱԹՈՂԻԿՈՍ՝
ՄԵԼՔԻՍԵԴԵԿ

ԲՈՒԽԱՐԵՍՏԻՑ

Եղբայրորեն բաժանում ենք Հայ եկեղեցու սուգը նրա ականավոր գործչի, գիտության մեծ մարդու, խաղաղության գաղափարի համար պայքարողի և նոանդուն հայրենասերի՝ Կիլիկիո Գարեգին Ա. Կաթողիկոսի մահվան համար և աղոթում ենք Աստծուն՝ որ նրա հոգին դասի ընդ դասս արդարոց և շնորհի արժանավոր հաջորդ՝ Անթիլիասի Աթոռի համար:

ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ՊԱՏՐԻԱՐՔ՝
ՀՈՒՍՏԻՆԻԱՆ

ԵՐՈՒՍԱՂԵՄԻՑ

Խորը վշտով հայտնում ենք Նորին Սրբություն Գարեգին Կաթողիկոսի մահը, որը տեղի ունեցավ այսօր (հունիսի 23-ին) վաղ առավոտյան: Հայտնում ենք մեր խոր ցավակցությունները Զերդ Վեհափառության: Հանգստություն նրա ոսկորներին:

Այսօր շտապ կարգով մեկնում ենք Բեյրութ:

ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ՝

ՏԵՐՏԵՐՅԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻՑ

Մեր մեծ կորուստին՝ Գարեգին Հայրապետի մահվան առթիվ ընդունեցեք մեր ցավակցությունը և սրտագին մաղթանքը Հայ Եկեղեցվո անսասանության և անոր Պետին՝ Զերդ Վեհափառության արևշատության համար:

ՊԱՏՐԻԱՐՔ՝

ԳԱԼԻԵԳԻՆ

ԵՐՈՒՍԱՂԵՄԻՑ

Ստացանք Զերդ Վեհափառության հեռագիրը: Ամբողջ կրոնական դասը, համայնքը, խոր վշտացած՝ ողբում ենք Գարեգին Կաթողիկոսի մահվան առթիվ: Մեր Եկեղեցին, Հայրենիքը և Ազգը անփոխարինելի կորուստ կրեց իր անձնակազմից: Գարեգին Կաթողիկոսը հանդիսանում էր մեր կուլտուրայի ականավոր, նվիրված և ջանասեր ներկայացուցիչներից մեկը:

Կատարվել է հոգեհանգստյան պատարագ Սրբոց Հակոբյանց տաճարում:

Տեղապահը անմիջապես մեկնեց Բեյրութ՝ թաղման մասնակցելու:

Աղոթում ենք Ամենակարող Աստծուն, որ պահպանե մեր Եկեղեցին, մեր Սուրբ Աթոռը և Զերդ Վեհափառության պարգևե երկար կյանք:

Երուսաղեմի հայոց պատրիարքական տեղապահի տեղակալ՝

ՍՈՒՐԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՔԵՄՀԱՃՅԱՆ

ՌԻԳԱՅԻՑ

Ստացա վշտագին լուրը Ձեր գլխավորած հին Առաքելական Եկեղեցու ականավոր գիտնական և անդուլ աշխատող՝ Կիլիկիո Կաթողիկոս Գարեգին Ա.ի մահվան առթիվ: Խնդրում եմ ընդունել իմ խորին ցավակցական զգացմունքների արտահայտությունը՝ Զերդ Սրբությանը, Հոգևոր Հովվի սգակիր հոտին և հոգևորականությանը:

Լատվիայի Ավետարանական-Լուտերական Եկեղեցու
Գերագույն Եկեղեցական Վարչության նախագահ՝

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳՈՒՍՏԱՎ ՏՈՒՐՍ

ՊՐԱԳԱՅԻՑ

Խորին ցավակցությունս եմ հայտնում Զերդ Սրբությանը՝ Կիլիկիո Գարեգին Ա. Կաթողիկոսի մահվան առթիվ: Հավերժական լինի նրա հիշատակը:

ՄԻՏՐՈՊՈԼԻՏ ԵԼԻՖԵՐԵՑ

ՏԱԼԻՆԻՑ

Սրտանց կարեկցում եմ և Էստոնիայի Ավետարանական-Լուտերական եկեղեցու անունից հայտնում եմ իմ խորին ցավակցությունը ականավոր գործիչ և խաղաղության համար մարտնչող Կիլիկիո Գարեգին Ա. Կաթողիկոսի մահվան առթիվ: Հավերժական լինի նրա հիշատակը:

Փոխանորդ եպիսկոպոս՝
ՅԱՆ ԿԻՅՎԻՏ

ԵՐԵՎԱՆԻՑ

Տանն Կիլիկիո Կաթողիկոս Տեր Գարեգին Վեհափառի մահվան գույժը մեր սրտերը դառն վշտով պատեց: Այս տխուր առթիվ հայտնում ենք մեր ցավակցությունները:

ԵՐԵՎԱՆԻ ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ, ՍՈՒՐԲ ԶՈՐԱՎՈՐ ԵՎ ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆՆԵՍ
ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔ

ՆՅՈՒ-ՅՈՐՔԻՑ

Մեր և մեր թեմի հոգևորականաց և վարչական մարմնոց և ժողովրդի կողմն խորագին վշտակցություն կհայտնենք Ձերդ Վեհափառության՝ ներկա դարու Հայ եկեղեցվո մեծագույն դեմքերեն Կիլիկիո Գարեգին Կաթողիկոսի մահվան համար և փառք կուտանք Տիրոջ՝ Ձեր կյանքի համար: Կմաղթենք Օծությանդ արևշատություն և կաղոթենք, որ Տերը պահպանե Հայ եկեղեցին և հայ հավատացյալ ժողովուրդը:

Որդիաբար՝
ՏԻՐԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ԼՈՍ-ԱՆՋԵԼՈՍԻՑ

Կալիֆորնիայի, Լոս-Անջելոսի հայկական համայնքը խորը ցավակցություն է հայտնում Նորին Սրբություն Գարեգին Կաթողիկոսի կորստյան առթիվ:

ԼՈՍ-ԱՆՋԵԼՈՍԻ ՍՈՒՐԲ ՀԱԿՈԲ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻ

ՖՐԵԶՆՈՅԻՑ

Նորին Սուրբ Օծություն Տեր Գարեգին Հայրապետի վախճանումը որքան կորուստ է Կիլիկիո Աթոռին և Սյուրիո հայության, նույնքան մեծ ցավ է բովանդակ ազգին, նաև Վեհափառությանդ և Մայր Աթոռին, որուն հարազատը, Ձեր ալ՝ հոգևոր եղբայրն էր ան: Անթիլիասեն առնվածեն հետո, ընդունեցինք նաև, սրտի դառն մորմոքով, Ձեր հեռագիրը: Մամուլին և եկեղեցիներուն հաղորդեցինք այս մեծ վիշտը և հրահանգեցինք կարևորը՝ մաղթանք կատարել եկեղեցու նվիրապետության հարատև պահպանության համար: Սուրբ Հոգին մխիթարե բոլորս ալ, Վեհափառ և վշտացյալ Տեր, հարուցանելով ժիր և անպարտելի մշակներ՝ հավերժ մեկնողներուն իբրև հաջորդներ:

ՎԱՐԴԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱՍՊԱՐՅԱՆ,

ԲՈՒԽԱՐԵՍՏԻՑ

Խոր վշտով խնդրում ենք ընդունել ռումինահայ ժողովրդի, թեմական խորհրդի և մեր կողմից ցավակցություններ՝ Գարեգին մեծազորձ Հայրապետի վախճանման առթիվ:

ՎԱՉԳԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻՑ

Շնորհազարդ Գարեգին Կաթողիկոսի վախճանումով, Հայ Եկեղեցվո անդարմանելի կորստին առթիվ, որդիական խորին ցավակցություն: Կհայցենք Ամենակարողեն՝ Ձերդ Վեհափառության երկար կյանք և Սուրբ Աթոռին՝ անսասանություն:

ՀՈՎՍԵՓ ԵՎ ԳՐԻԳՈՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐ

ՆՅՈՒ-ՅՈՐՔԻՑ

Վեհափա՛ռ Հայրապետ.

Կիլիկիո շնորհազարդ Տ. Տ. Գարեգին Կաթողիկոսի վախճանումը կսգանք ազգովին: Անոր մանը խորապես վշտացուցած է Ձերդ Վեհափառությունը, որ երջանկահիշատակ Հայրապետի դասակիցն ու օծակիցն ենք եղած:

Կաղոթենք իր հոգվույն համար և Ձերդ Վեհափառության կմաղթենք արեշատություն և Սուրբ Հոգվո մխիթարություն:

Մատչելով ի համբույր Սուրբ Աջույդ, մնամ որդիական ակնածանոք՝

ՄԱՄԲՐԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ԼԵՆԻՆԱԿԱՆԻՑ

Թեմական խորհուրդը, հոգևորականությունը և անձամբ ես հայտնում ենք Ձերդ Սրբությանը՝ մեր խորին ցավակցությունը, Կիլիկիո Գարեգին Ա. Կաթողիկոսի մահվան առթիվ:

Կատարում ենք հոգեհանգիստ մեր սիրելի և գործունյա Վեհափառի համար:

Շիրակի հոգևոր թեմի առաջնորդ՝
ԳԱՐԵԳԻՆ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ

ԲԱՔՎԻՑ

Եկեղեցական-թեմական խորհուրդը իր խորին ցավակցությունն է հայտնում Ձերդ Սրբությանը մեզ բոլորիս հասած ծանր վշտի՝ Կիլիկիո Գարեգին Ա. Կաթողիկոսի մահվան առթիվ:

Հայ Եկեղեցին հանձին Նորին Սրբության զրկվեց Հայրենիքի մեծագույն հայրենասերից և Հայ Եկեղեցու արժեքների պաշտպանից:

Թեմի առաջնորդական տեղապահ՝
ՎԱՐԴԳԵՍ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ

ԱՐԳԵՆՏԻՆԱՅԻՑ

Վեհափա՛ռ Տեր.

Համայն հայության հետ միասին, նաև հեռավոր այս ափերուն վրա հաստատված արժանտինահայությունը խոր կսկիծով իմացավ Տանն Կիլիկիո Տ. Տ. Գարեգին Ա. Կաթողիկոսի մահվան շանթահարիչ լուրը:

Ձերդ Սուրբ Օծության այս առիթով հղած հեռագիրը ամբողջական կերպով ի հայտ կբերեր հանգուցյալի բազմապիսի ծառայությունները հայ ժողովուրդին ու Հայրենիքին, մեր Սրբազան Հայաստանյայց Եկեղեցիին ու ազգային մշակույթին:

Ամբողջ արժանտինահայությունը իր հոգևոր դասովը, վարչական և մշակութային մարմիններով իր խոր ցավը կմիացնե Ձերդ Վեհափառության և Սուրբ Էջմիածնի միաբանության ու համայն հայության վիշտին, այս անփոխարինելի և անդարմանելի կորուստին առթիվ:

Համաձայն Ձերդ Սուրբ Օծության հրահանգին, հունիս 29-ին, կիրակի, տեղվույն Սուրբ Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցվո մեջ հանդիսավոր սուրբ պատարագ մատուցվեցավ ձեռամբ հոգեշնորհ Տ. Հարություն վարդապետ Մուշյանի, որ իր ոգեշունչ քարոզով հայտնաբերեց հանգուցյալ Գարեգին Ա. Կաթողիկոսի բարեմասնությունները և իր մատուցած բազմապիսի օգտաշատ ծառայությունները:

Հոգեհանգստյան պաշտոն կատարվեցավ հանգուցյալի հիշատակին և եկեղեցին ու գավիթը լեցնող հավատացյալներու խուռն բազմությունը իր խոր կսկիծը արտահայտելով միասին, իր արտագին աղոթքն ուղղեց առ Բարձրյալն Աստված, որ հանգիստ շնորհե Հանգուցյալի հոգվույն և նոր ու արժանավոր հաջորդներով լեցնե բացը, որ կթողու Գարեգին Ա. Կաթողիկոսը իր մահով:

Հայտնելով արժանտինահայության և մեր խոր կսկիծը Տանն Կիլիկիո Վեհափառ Հայրապետի դառնաղետ և անդարմանելի մահվան առթիվ, մնամք միշտ ի համբույր Ձերդ Վեհափառության Սուրբ Աջույն և խորին ակնածանոք,

Ի դիմաց Հայաստանյայց Առաքելական Եկեղեցվո
Արժանտինի Կեդրոնական վարչական խորհրդոյ՝

Ատենադպիր՝ ՍԱՐԱՖՅԱՆ

Ատենապետ՝ Ա. ՍԿԵՐԿԱՄԱԼԻ